# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 21-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի և կից գործող հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թվականի բյուջեի եկամուտների տեղաշարժի մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
10. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

11. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

12. Գույքի օտարման մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

13. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Տիգրան Պետրոսյան փողոցի 1-ին նրբ. թիվ 21 հասցեի 600.0քմ մակերեսով հողամասը փոխանակության միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

14. Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 288/2 հասցեի առևտրի տաղավարը և վերջինիս սպասարկման 43.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

15. Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 2Ա/14 հասցեի մառանը և վերջինիս սպասարկման 277.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

16. Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 73/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 22.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

17. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 7613.8քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

18. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2500.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 22-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի եկամուտների և ծախսերի տարեկան կատարման հաշվետվությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի եկամուտների տարեկան կատարողականը /հատված թիվ 1/:
2. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի ծախսերի տարեկան կատարողականը /հատված թիվ 2/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01. 2012թ. - 01.01.2013թ. ժամանակահատվածի համար)

| Եկամտատեսակները | Տարեկան ծրագիր | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
| 2 | 10 | 11 | 12 | 7 | 8 | 9 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 297,085.1 | 297,085.1 | 0.0 | 297,937.9 | 297,937.9 | 0.0 |
| այդ թվում՝ 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 81,633.7 | 81,633.7 | X | 81,970.0 | 81,970.0 | X |
| 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 41,304.7 | 41,304.7 | X | 41,401.2 | 41,401.2 | X |
| այդ թվում՝Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 18,100.0 | 18,100.0 | X | 18,191.0 | 18,191.0 | X |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 23,204.7 | 23,204.7 | X | 23,210.2 | 23,210.2 | X |
| 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 21,300.0 | 21,300.0 | X | 21,434.4 | 21,434.4 | X |
| այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 21,300.0 | 21,300.0 | X | 21,434.4 | 21,434.4 | X |
| 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 14,529.0 | 14,529.0 | X | 14,581.6 | 14,581.6 | X |
| այդ թվում՝ Տեղական տուրքեր | 14,529.0 | 14,529.0 | X | 14,581.6 | 14,581.6 | X |
| այդ թվում՝ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար | 2,540.0 | 2,540.0 | X | 1,307.5 | 1,307.5 | X |
| որից՝ աա) Հիմնական շինությունների համար | 2,540.0 | 2,540.0 | X | 1,307.5 | 1,307.5 | X |
| աբ) Ոչ հիմնական շինությունների համար | 0.0 | | X | 0.0 | | X |
| բ) Համայնքի վարչ. տարածքում շենքերի, շինություն-ի, քաղաքաշինական այլ օբյեկտ-ի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ կատարելու | 105.0 | 105.0 | X | 30.0 | 30.0 | X |
| գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 30.0 | 30.0 | X | 20.0 | 20.0 | X |
| դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | 4,000.0 | 4,000.0 | X | 3,495.0 | 3,495.0 | X |
| ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար | 42.0 | 42.0 | X | 49.7 | 49.7 | X |
| զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ | 1,350.0 | 1,350.0 | X | 1,050.0 | 1,050.0 | X |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 530.0 | 530.0 | X | 529.0 | 529.0 | X |

*Համայնքի ղեկավար* Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*ֆինանսական բաժնի պետ* Գ.ՂԱԿԹՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(գործառական դասակարգմամբ)

(01.01.2012թ. - 01.01.2013թ. ժամանակահատվածի համար)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան ծրագիր | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | |
| | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 2 | 3 | 4 | 5 | 12 | 13 | 14 | 9 | 10 | 11 |
| X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 465,734.7 | 297,085.1 | 168,649.6 | 320,096.7 | 296,780.9 | 24,265.8 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 82,899.4 | 76,899.4 | 6,000.0 | 81,660.5 | 76,767.6 | 4,892.9 |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 78,505.1 | 72,505.1 | 6,000.0 | 77,270.6 | 72,377.7 | 4,892.9 |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 2,197.3 | 2,197.3 | | 2,197.3 | 2,197.3 | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 2,197.0 | 2;197.0 | | 2,192.6 | 2,192.6 | |
| 02 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 165.0 | 165.0 | | 165.0 | 165.0 | |
| 02 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 165.0 | 165.0 | | 165.0 | 165.0 | |
| 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 33,530.0 | 30.0 | 33,500.0 | -62,681.5 | 30.0 | -62,711.5 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 30.0 | 30.0 | | 30.0 | 30.0 | |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 303,500.0 | | 303,500.0 | 243,901.0 | | 243,901.0 |
| 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -270,000.0 | | -270,000.0 | -306,612.5 | | -306,612.5 |
| 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 44,590.0 | 32,590.0 | 12,000.0 | 32,570.0 | 32,570.0 | 0.0 |
| 05 | 1 | 1 | Աղբահանում | 34,590.0 | 32,590.0 | 2,000.0 | 32,570.0 | 32,570.0 | |
| 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 10,000.0 | | 10,000.0 | | | 6,964.5 |
| 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 70,037.8 | 29,524.2 | 40,513.6 | 41,483.7 | 29,523.8 | 11,959.9 |
| 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 31,381.6 | | 31,381.6 | 4,383.6 | | 4,383.6 |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 35,335.9 | 26,203.9 | 9,132.0 | 33,780.2 | 26,203.9 | 7,576.3 |
| 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ | 3,320.3 | 3,320.3 | | 3,319.9 | 3,319.9 | |
| 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 68,927.5 | 43,159.1 | 25,768.4 | 66,216.4 | 43,139.8 | 24,026.6 |
| 08 | 1 | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 950.0 | | 950.0 | | | 950.0 |
| 08 | 2 | 1 | Գրադարաններ | 14,960.0 | 14,960.0 | | 14,960.0 | 14,960.0 | |
| 08 | 2 | 2 | Թանգարաններ և ցուցասրահներ | 11,196.0 | 10,196.0 | 1,000.0 | 10,271.0 | 10,196.0 | 75.0 |
| 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 15,323.5 | 14,323.5 | 1,000.0 | 14,523.4 | 14,323.4 | 200.0 |
| 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 4,069.6 | 3,319.6 | 750.0 | 4,068.4 | 3,318.4 | 750.0 |
| 08 | 3 | 2 | Հրատարակչություններ, խմբագրություններ | 360.0 | 360.0 | | 342.0 | 342.0 | |
| 8 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող) | 22,068.4 | | 22,068.4 | 22,051.6 | | 22,051.6 |
| 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 160,155.0 | 109,287.4 | 50,867.6 | 155,277.2 | 109,179.3 | 46,097.9 |
| 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 124,012.8 | 78,145.2 | 45,867.6 | 123,126.3 | 78,145.2 | 44,981.1 |
| 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 33,596.0 | 28,596.0 | 5,000.0 | 29,604.7 | 28,487.9 | 1,116.8 |
| 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ | 2,546.2 | 2,546.2 | | 2,546.2 | 2,546.2 | |
| 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 5,430.0 | 5,430.0 | 0.0 | 5,405.4 | 5,405.4 | 0.0 |
| 10 | 4 | 1 | Ընտանիքի անդամներ և զավակներ | 2,850.0 | 2,850.0 | | 2,830.0 | 2,830.0 | |
| 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 2,580.0 | 2,580.0 | | 2,575.4 | 2,575.4 | |
| 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 0.0 | | | 0.0 | | |

Համայնքի ղեկավարի — Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ֆինանսական բաժնի պետ — Գ.ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 23-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի և կից գործող հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի
ավագանու 2013 թվականի
փետրվարի 28-ի թիվ 23Ա որոշման

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խնամակալության և հոգաբարձության մարմինները սահմանվում են օրենքով:

2. Խնամակալության և հոգաբարձության մարմինը համայնքի ղեկավարն է:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմին կից ստեղծվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը (5-9-ը անձ) հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ հանձնաժողովի անհատական կազմից սահմանվում են նաև հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար:

4. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների աշխատողներ, համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

6. Խնամակալության և հոգաբարձության մարմինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

7. Խնամակալության և հոգաբարձության մարմինը իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է մարզպետարանի, այլ համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների, հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ:

8. Խնամակալության և հոգաբարձության մարմինը երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն ստանում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն են ստանում նաև մարզպետարանից:

9. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն իրենց գործունեությունը կազմակերպում և իրականացնում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված աշխատանքային տարեկան ծրագրերով:

10. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան:

11. Խնամակալության և հոգաբարձության մարմինների որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

## II. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Խնամակալության և հոգաբարձության մարմինների խնդիրներն են՝

1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

2) ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը.

3) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

4) օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

## III. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրականացնում են հետևյալ գործառույթները՝

1) սահմանում են՝

ա. խնամակալություն տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,

բ. հոգաբարձություն 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ.

2) իրականացնում են՝

ա. խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը,

բ. երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանություն՝ երեխայի իրավունքների և շահերի խախտման, երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, կամ երեխայի դաստիարակությունից, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու, կամ ծնողական իրավունքների չարաշահման դեպքերում,

գ. առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի պայմանների հետազոտություն և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի բացակայության փաստի հաստատման դեպքում ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ մինչև նրա տեղավորման հարցի լուծումը՝ օրենքով սահմանված կարգով,

դ. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը,

ե. երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն և ներկայացնում դատարան հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը,

զ. վերահսկողություն խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ,

է. հսկողություն է իրականացնում խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ.

3) նշանակում են քաղաքացու օգնական (պատրոն)՝ քաղաքացու համաձայնությամբ չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները: Սահմանված պատրոնաժը դադարում է օրենքով նախատեսված դեպքերում.

4) թույլատրում են՝

ա. խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, ինչպես նաև նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն, խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքների,

բ. հոգաբարձուին 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա,

գ. սահմանված կարգով ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա.

5) բացահայտում են՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ. ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը և ապահովում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը,

գ. համայնքում երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին, միաժամանակ նախաձեռնում դրանց գրանցման գործընթացը,

դ. համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը և դրա մասին իրազեկում լիազոր մարմնին.

6) հաշվի են առնում 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց լուծելիս.

7) հաշվառում են անչափահաս տուժողին, քաղաքացիական հայցվորին, կասկածյալին, մեղադրյալին.

8) ընտրում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերը (խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը, խնամակալ, հոգաբարձու նշանակելը)՝ ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից.

9) մասնակցում են՝

ա. դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը,

բ. երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին,

գ. դատարանում ծնողական իրավունքների վերականգնման քննությանը,

դ. ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերի քննությանը,

ե. դատարանում 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին գործերի քննմանը՝ օրենքով սահմանված դեպքերում,

զ. անչափահասների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը,

է. քրեական վարույթում որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ.

10) աջակցում են՝

ա. խնամատար ընտանիքին՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար,

բ. խնամակալներին և հոգաբարձուներին խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում.

11) քննության են առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները.

12) լուծում են ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները.

13) քննարկում են ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև համայնքում առկա գենդերային հիմնախնդիրները.

14) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

## IV. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Խնամակալության և հոգաբարձության մարմինների իրավունքներն ու պարտականություններն են՝

1) կնքում են՝

ա. գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր իրենց կողմից նշանակված կառավարչի հետ՝ խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում,

բ. խնամատար ծնողների (ծնողի) հետ պայմանագիր երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին.

2) կարող են անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում նշանակել այդ գույքի կառավարիչ և նրա հետ կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր, ինչպես նաև կառավարչի նշանակման օրվանից 3 տարի անցնելուց հետո դիմում են դատարան՝ անձին մահացած ճանաչելու համար, եթե անձին անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը չի վերացվել.

3) կարող են խնամակալին կամ հոգաբարձուին ազատել իր պարտականությունների կատարումից և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար՝

ա. խնամակալությունը և հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում,

բ. անչափահասին իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում,

գ. խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատությունում տեղավորելիս (եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին),

դ. հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխադարձ ըմբռնման բացակայություն և այլն) դեպքում,

ե. խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու դեպքում.

4) երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են

ծնողներից կամ խնամակալից, անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով.

5) դիմել դատարան 14-18 տարեկան անչափահասի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու միջնորդությամբ.

6) կարգավորում են անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունները.

7) կարող են պարտավորեցնել ծնողներին կամ ծնողին նրանցից մեկի մերժման դեպքում չխանգարելու պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը.

8) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների.

9) խնամակալներին և հոգաբարձուներին տալիս են համապատասխան վկայագրեր լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով և ձևանմուշին համապատասխան.

10) անչափահասի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) մասին.

11) ընդունում են որոշում ընտրված երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին.

12) տալիս են համաձայնություն անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում.

13) անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն են սահմանում՝ ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության և այլ դեպքերում.

14) իրավունք ունեն ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնել օրենքով սահմանված դեպքերում.

15) օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 24-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2013թվականի փետրվարի 7-ի թիվ 94-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 287 որոշմամբ հաստատված համայնքի 2013 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թվականի վարչական բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամուտներն ավելացնել 1787.47 հազ.դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013 թվականի վարչական բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (բաժին 1խումբ 3 դաս3) ծախսերն ավելացնել 1787.47հազ.դրամ, որից՝

1) հոդված 4111 –1698.0 հազ.դրամ
2) հոդված 4112 – 43.47 հազ.դրամ
3) հոդված 4114 – 7.0 հազ.դրամ
4) հոդված 4121 – 39.0 հազ.դրամ

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 25-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը , ելնելով անհրաժեշտությունից, առաջարկություն է ներկայացրել համայնքի 2013թվականի բյուջեում կատարել որոշ փոփոխություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեով նախատեսված «Այլ եկամուտներ» – 25000000 դրամ կատարել տեղաշարժ «Համայնքի կողմից աղբահանության կազմակերպման համար աղբահանության վճար»

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 26-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2013թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և կատարել հատկացում՝

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/՝
1) «Արտադպրոցական դաստիարակություն» /բաժին 09, խումբ 05, դաս 01, հոդված 5134/ - 950000 դրամ
2. Դիլիջան քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/՝
1) «Այլ մշակութային կազմակերպություններ»/բաժին 08, խումբ 02, դաս 04, հոդված 4237/ - 344000 դրամ

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2013թվականի N 27-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքը զբոսաշրջության սեզոնին նախապատրաստելու, ինչպես նաև առավել բարետես դարձնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել իրականացնել կենտրոնական փողոցների մայթերի հիմնանորոգման և հարակից գազոնների վերականգնման աշխատանքներ, ինչի համար պետք է կատարել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքների գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Հակոբջանյան և Մյասնիկյան փողոցների հատման հատվածից մինչև Շահումյան փողոցի վերջնամասի կամուրջն ընկած փողոցների մայթերի հիմնանորոգման և գազոնների վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 450000 դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 28-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ենթակայության «Երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել համաձայն օրենսդրության պահանջների կատարել շենքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնում ՝ ներգրավելով համապատասխան մասնագիտական կարողություն ունեցող անձանց:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Արտադպրոցական դաստիարակություն» /բաժին 09, խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 950000 դրամ:

Կողմ -9　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 29-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել հիմնանորոգել քաղաքի Մյասնիկյան փողոցի քաղաքային շուկայի հատվածից դեպի Մ.Գորկի փողոց տանող ոլորապտույտին հարակից հենապատը:
Նշված աշխատանքները ժամանակին , որակով իրականացնելու համար անհրաժեշտ է օրենսդրության պահանջներով կատարել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքների գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի քաղաքային շուկայի հատվածից դեպի Մ.Գորկի փողոց տանող ոլորապտույտին հարակից հենապատի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 500000 դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 30-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կազմակերպել 2013թ մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա տոնական միջոցառում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Մարտի 8-ի տոնական միջոցառման կազմակերպման ծառայությունների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասից «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4237 /հատկացնել 344000 դրամ :

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 31-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 8 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» /բաժին 10 խումբ 7, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 145000 դրամ, այդ թվում ՝

- Ք.Դիլիջան Սայաթ-Նովա 161 հասցեի բնակիչ Բարսեղ Մանթաշյանին- 20000 դրամ
- ք.Դիլիջան Կամո 18 հասցեի բնակիչ Լաուրա Գամավեյան - 25000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 26/26 հասցեի բնակիչ Օֆելյա Աղաջանյանին – 20000դրամ
- ք.Դիլիջան Կալինինի 2-րդ նրբ.1 հասցեի բնակիչ Ալիկ Ալիխանյանին – 20000 դրամ
- ք.Դիլիջան Օրջոնիկիձե 31 հասցեի բնակիչ Սեդա Սարգսյանին – 15000 դրամ
- ք.Դիլիջան Գայի 35 բն. 14 հասցեի բնակիչ Գենիկ Մելիքյանին – 15000 դրամ
- ք.Դիլիջան Օրջոնիկիձե 77 բն.16 հասցեի բնակիչ Վարդուշ Ամիրյանին -15000 դրամ
- ք.Դիլիջան Կալինինի 183 բն.17 հասցեի բնակիչ Համբարձում Խոջայանին – 15000 դրամ :

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 32-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՅԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Այգեստան փողոցի թիվ 2 ա հասցեի շենքին հարակից տարածքում,համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0053-0053 ծածկագրով հողում քաղ. Մարի Մարտիրոսյանի կողմից կառուցված ինքնակամ տնտեսական շինություն, որը բաղկացած է 31.5քմ մակերեսով նկուղից և 31.5քմ մակերեսով ավտոտնակից
- Դիլիջանի քաղաքային համայնքի Այգեստան փողոցի թիվ 2 ա հասցեի շենքին հարակից տարածքում,համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0053-0021 ծածկագրով հողում քաղ. Արսեն Գրիգորյանի կողմից կառուցված ինքնակամ շինություն, մասնավորապես 34.3քմ մակերեսով ավտոտնակ:
- Դիլիջանի քաղաքային համայնքի Օրջոնիկիձե փողոցի թիվ 73 հասցեի շենքին հարակից տարածքում,համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0258-0026 ծածկագրով հողում քաղ. Սոս Գրիգորյանի կողմից կառուցված ինքնակամ շինություն, որը բաղկացած է 26.0քմ մակերեսով նկուղից և 26.0 քմ մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.

- Դիլիջանի քաղաքային համայնքի Այգեստան փողոցի թիվ 2 ա հասցեի շենքին հարակից տարածքում,համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0053-0053 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ տնտեսական շինություն՝ նկուղ 31.5քմ-81900 դրամ և ավտոտնակ 31.5քմ- 81900 դրամ:
- Դիլիջանի քաղաքային համայնքի Այգեստան փողոցի թիվ 2 ա հասցեի շենքին հարակից տարածքում,համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0053-0021 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն, մասնավորապես ավտոտնակ 34.3քմ-44590 դրամ
- Դիլիջանի քաղաքային համայնքի Օրջոնիկիձե փողոցի թիվ 73 հասցեի շենքին հարակից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 33-Ա

### ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել քաղաքի երկու բնակարաններ ուղղակի վաճառքի միջոցով վարձակալներին օտարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ բնակարաններն օտարել՝ մեկ քառակուսի մետրի համար սահմանելով 1500դրամ.

1.Կալինինի փողոցի թիվ 171 շենքի թիվ 7, երեք սենյականոց 72.98 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով օտարել 109470 դրամով:
2.Մոլոդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 15, երկու սենյականոց 61.8ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով օտարել 92700 դրամով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

8. ՄԿՐՏՈՒՍՅԱՆ ՍԱՀԱԿ

9. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 34-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ 600.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ղուկաս Սանթրոսյանը՝ իր սեփականությունը հանդիսացող, Հովքի փողոցի 3-րդ նրբ. թիվ 10 հասցեի 600.0քմ հողամասը Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Տիգրան Պետրոսյան փողոցի 1-ին նրբ. թիվ 21 հասցեի 600.0քմ հողամասի հետ փոխանակելու խնդրանքով:

Համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել քաղ. Ղուկաս Սանթրոսյանի սեփականությունը հանդիսացող, Հովքի փողոցի 3-րդ նրբ. թիվ 10 հասցեի 600.0քմ հողամասը Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Տիգրան Պետրոսյան փողոցի 1-ին նրբ. թիվ 21 հասցեի համարժեք 600.0քմ հողամասի հետ փոխանակելու մասին առաջարկություն՝ հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 71 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Տիգրան Պետրոսյան փողոցի 1-ին նրբ. թիվ 21 հասցեի 600.0քմ հողամասը փոխանակության միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը: Ընդ որում, որպես փոխանակվող գույք է հանդիսանում քաղ. Ղուկաս Սանթրոսյանի սեփականությունը հանդիսացող, Հովքի փողոցի 3-րդ նրբ. թիվ 10 հասցեի 600.0քմ համարժեք հողամասը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 35-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 288/2 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՏԱՂԱՎԱՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 43.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Սաթենիկ Պողոսյանի կողմից Կալինինի փողոցի թիվ 288/2 հասցեում ինքնակամ կառուցված 27.0քմ մակերեսով առևտրի տաղավարը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. փետրվարի 4-ի թիվ 41-Ա որոշմամբ նշված ինքնակամ կառուցված առևտրի տաղավարը ճանաչվել է օրինական: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 27.0քմ մակերեսով առևտրի տաղավարը և վերջինիս սպասարկման 43.0քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Սաթենիկ Պողոսյանին, համապատասխանաբար, 413100 դրամ և 82302 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Կալինինի փողոցի թիվ 288/2 հասցեում գտնվող 27.0քմ մակերեսով առևտրի տաղավարը և վերջինիս սպասարկման 43.0քմ հողամասը, համապատասխանաբար, 413100 դրամ և 82302 դրամ արժեքներով, քաղ. Սաթենիկ Պողոսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

ԴԻԼԻՋԱՆԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2Ա/14 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 277.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Վաչիկ Դիլանյանի կողմից Այգեստան փողոցի թիվ 2ա/14 հասցեում ինքնակամ կառուցված 41.44քմ մակերեսով մառանը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. փետրվարի 13-ի թիվ 64-Ա որոշմամբ նշված ինքնակամ կառուցված մառանը ճանաչվել է օրինական /սեփ. վկայական՝ թիվ 21022013-11-0165/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 41.44մ մակերեսով մառանը և վերջինիս սպասարկման 277.0քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Վաչիկ Դիլանյանին, համապատասխանաբար, 107744 դրամ և 344034 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Այգեստան փողոցի թիվ 2ա/14 հասցեում գտնվող 41.44քմ մակերեսով մառանը և վերջինիս սպասարկման 277.0քմ հողամասը, համապատասխանաբար, 107744 դրամ և 344034 դրամ արժեքներով, քաղ. Վաչիկ Դիլանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2013թվականի N 37-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 73/5 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 22.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Վարդան Ավագյանի կողմից Օրջոնիկիձե փողոցի թիվ 73/5 հասցեում ինքնակամ կառուցված 22.8քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. փետրվարի 13-ի թիվ 63-Ա որոշմամբ նշված ինքնակամ կառուցված ավտոտնակը ճանաչվել է օրինական /սեփ. վկայական՝ թիվ 21022013-11-0164/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 22.8քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 22.8քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Վարդան Ավագյանին, համապատասխանաբար, 29640 դրամ և 28318 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝

Տալ համաձայնություն Օրջոնիկիձե փողոցի թիվ 73/5 հասցեում գտնվող 22.8քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 22.8քմ հողամասը, համապատասխանաբար, 29640 դրամ և 28318 դրամ արժեքներով, քաղ. Վարդան Ավագյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 38-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 7613.8ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2013թ. փետրվարի 26-ի թիվ 84-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 7613.8քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 7613.8քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Առդուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու 2013թ.
նոյեմբերի 28-ի թիվ 38-Ա որոշման

## Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 6/ՔՀ-13/ | Կալինինի 243/23 | 0141-0070 | 20,8 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 52 000 | չկան |
| 2 | Լոտ 7/ՔՀ-13/ | Մ.Գորկու 27/3 | 0125-0029 | 337,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 842 500 | չկան |
| 3 | Լոտ 8/ՔՀ-13/ | Անդրանիկի 2-րդ նրբ. 37/3 | 0123-0186 | 825,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 2 062 500 | չկան |
| 4 | Լոտ 9/ՔՀ-13/ | Խորհուրդների 10/1 | 0311-0013 | 6 431,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 16 077 500 | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2013թվականի N 39-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2500.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 26-ի թիվ 85-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2500.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և մեկնարկային գնով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2500.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

Առդրատ.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2013թ. փետրվարի 28-ի թիվ 394-Ա որոշման

## Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/ՔԿ-13/ | Մ.Գորկու 29/38 | 0125-0030 | 2 500,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 40 տարի | 50000 դրամ | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* [signature] *Ա Մարտիրոսյան*